ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 235-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐԱԲԱԿ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ,80 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՐԳԵՅ ԻՇԽԱՆԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 64-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով Սերգեյ Բադալյանի դիմումը՝ իրեն պատկանող շինության սպասարկման տարածքը սեփականության իրավունքով հատկացնելու մասին, քանի որ Ճամբարակ համայնքի Դպրաբակ գյուղի 1-ին փողոց,80 հասցեում գտնվող Սերգեյ Իշխանի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող շինության սպասարկման տարածքի հողհատկացման փաստաթղթերը չեն պահպանվել.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Ճամբարակ համայնքի Դպրաբակ գյուղի 1-ին փողոց 80 հասցեում գտնվող Սերգեյ Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող շինության սպասարկման տարածքը՝ 0,08156 հա մակերեսով, սեփականության իրավունքով հատկացնել Սերգեյ Իշխանի Բադալյանին:
2. Նշված հողամասը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի սեփականատիրոջ փոփոխության դեպքում անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվում հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը համապատասխանաբար պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքը, որը կազմում է 180000 /հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել քաղշին բաժնի գլխավոր մասնագետ Վրեժ Դանիելյանի վրա:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

2024 թ. փետրվարի 29
ք.Ճամբարակ